

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

«Քիւղանդիոն»ը հաղորդում է, որ հայ հռովմէականների պատրիարք Թերզեան Սրբազանը մօտ օրերս կուղևորուի Հռովմ։

Երեսփոխ. ժողովի վերջին նստին կանոնադրութեան քննութեան խնդիր է եղել, Թերզեան սրբազանը համամիտ է գտնուել բայց իւր ներկայութիւնը անհրաժեշտ չէ համարել. իրան փոխանորդող մի Տեղապահ պէտք է կարգի։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

Պրաւօսլաւ եկեղեցի.

«Кавказ»-ում (№ 165) կարդում ենք, որ պրաւօսլաւ սրբազնազործ պաշտօնեաների—քահանաների և սարկաւազների—կրկնամուսնութեան խնդիրը նորից յարուցուած է ռուսաց սրբազնազոյն Սինոդում ոչ թէ վերջնականապէս վճռելու, այլ այդ առիթով Սրբ. Սինոդի անդամների կարծիքները իմանալու. Այդ կարծիքները յետոյ կը զեկուցուեն ի բարեհայեցողութիւն ապագայ եկեղեցական ժողովի։

Յունիսի 25-ին վերջացրել է իւր զբաղմունքները կաղանի միոթօներական ժողովը, որին մասնակցում էի 22 թեմերի ներկայացուցիչներ, իսկ 26-ին Գերմոգեն եպիսկոպոսի և նախագահ Նիկանդր արքեպիսկոպոսի ճառերով ժողովը հրատարակուեց փակուած։

Ժողովի եզրակացութիւնները ամփոփուած են մի կարգորոշումների մէջ, որ նախապէս մշակել էին զանազան մասնաժողովները։

Թուրքեստանի, Տօբոլի նահանգների և կիրգիզեան

երկրի քարոզչական խնդրի առիթով յունիսի 16-ին ժողովը ընդունել և հաստատել է մի քանի որոշումներ, որոնք (1, 2, 3,) վերաբերում են նորակնունք օտարազգիներին որոշ քանակութեամբ հողեր յատկացնելու՝ նրանց տնտեսութեան համար տեղական պայմաններին համեմատու եւ նորակնունքներին իրանց նոր բնակավայրերում տեղաւորեցնելու համար կառավարութիւնից նպաստ խնդրել։ 4 Թուրքիստանի հոգեւոր սեմինարեաներում հին լեզուների տեղ արաբերէն և տեղական սարգերէն ու կիրգիզերէն սովորեցնել։ Պրօֆիմնազիա աւարտողներին, կրօնական առարկաներից (բացի հին լեզուները) նախապէս քննելուց յետոյ ընդունել հոգ. սեմինարիա։ 6. միջնորդել, որ Սրբ. Սինօզը իւր միջոցներից աշակերտագլուխ 180ռ. բայց թողնի Թուրքեստանի հոգե. սեմինարիայում տեղացիներից 100 գիշերօթիկ պահելու համար։ 7, որ Թուրքեստանի հոգ. սեմինարիայի դասատուների ռոճկի վերայ համեմատութեամբ երոպ. Ռուսաստանի՝ յաւելում լինի, ի նկատի ունելով կեանքի դժուարութիւնները խուլ Ասիայում։

8, որ վերնի քաղաքում հոգե. սեմինարիա հաստատուի, և դրա շինութեան համար էլ գումար յատկացնել կամ հեղե. դպրոցների շինութեան գումարից, կամ պետական գանձարանից խնդրել։

Լամայականութեան դէմ մաքառելու համար ժողովը նոյն յունիսի 25-ին որոշել է.

1, Լամայականութեան դէմ մաքառելու համար պէտք է որ քարոզիչները մտաւորապէս և քարոյապէս բարձր լինեն լամայական հոգեւորականութիւնից։ Ուրեմն պէտք է քարոզիչներ պատրաստելու համար հոգալ, և քարոզիչներ նշանակել համայնքներում և եթէ հնար է, կալմուխ բնակչութեան սահմանակից ծխերում, կալմուխների վերայ ևս ազդելու համար։ 2, կալմուխ հոգեւորականութեան մտաւոր մակերևոյթը բարձրացնելու համար, քարոզիչները պէտք է իրանց քարոզչական պատրաստութիւնն էլ բարձրացնեն Կաղանի քարոզչական դասընթացներում... 3, հեռաւոր նահանգներում, որպիսիք են Աստրախան, Ստաւրօպօլ, Դոն, պէտք է ունենալ մի ընդհանուր սինօդական քա-

բողիչ, որը պէտք է ապրի կալմիկներէ երկրի կենդրոնում, կալմիկներէ վանքում, 5. Լամայական հոգեւորականութեան ազդեցութիւնը նուազեցնելու համար Սըր. Սինօզի միջոցով միջնորդել ներքին գործոց նախարարին, որ սահմանուած թուից աւելի Լամայական հոգեւորականներ չլինեն, 6. խնդրել ներքին գործերի նախարարին, որ ուշադրութիւն դարձնի Տիբեթի Դալայ—Լամայի ներկայացուցիչ Աւգան Դորգջիեվի այցելութիւններէ վերայ, որովհետեւ այդ այցելութիւնները վնասակար հետեանքներ են ունենում:

Церк. Вѣст.—ը (№ 27) մէջ բերելով Կազանի միսիօներական ժողովի այս որոշումները գրում է. ժողովի բացման օրը մի աշխարհական ճառախօս ասել է, որ «մենք ստիկանական միջոցների չպէտք է դիմենք», որ քարոզիչները պէտք է ոգևորուած լինեն Բրիտանիայի խոնարհութեամբ, բայց մի քանի օրից յետոյ նոյն ճառախօսը Լամայականների դէմ մաքառման մէջ խոտելի չէ համարել (5, 6 կէտ) ստիպողական միջոցների դիմելը:

«Չգիտենք ինչին զարմանալք. թեթեւութեանը, որով Կազանի քարոզչական ժողովի մի քանի հռետորները անցնում էին մի մտքից դէպի միւսը և հակասում իրանց ասածին. թէ՛ կարիքների վերաբերութեամբ նրանց անշահասէր հոգացողութեանը»: Նոյն լրագիրը նկատելով, որ Կազանի միսիօներական ժողովը անուշադիր մնաց մամուլի կողմից, ասում է. «Голосъ Москвы» (№ 143) այդ բանը բացատրում է նրանով, որ այդ ժողովները խիստ պաշտօնական կերպարանք են ունենում, և կարծես քննելի խնդիրները կանխօրոշուած են բերում. ժողովի մէջ գերակշռում է բարձրաստիճան անձինքների կամքը: Նոյն «Голосъ Москвы» (№ 146) ուշադրութիւն է դարձնում և այն բանի վերայ, որ ժողովը գրականութիւնը համարել է հակակրօնական և հարկաւոր է համարել նրա դէմ մաքառել: Լրագիրը տարօրինակ է համարում այս վարմունքը մանաւանդ այն ժամանակ՝ երբ Գահի բարձրութիւնից խղճի ազատութիւն է յայտարարուած: Այժմ, ասում է լրագիրը, կարծես ամենալաւ ժամանակն է գաղափարական քան ստիկանական կամ դիւանական գործունէութեան համար. մինչդեռ

եկեղեցական ծայրայեղ էլեմենտները դուրս են գալիս հասարակական կեանքի և մտքի վերայ հոգաբարձու լինելու յաւակնութեամբ: Հասարակական կեանքի և մտքի, որի մէջ մտնում են քաղաքականութիւնը, կայսութիւնը, գրականութիւնը, գիտութիւնը և գեղարուեստը, մինչև թատրոնը: Ինտելլիգենցիային եկեղեցուց մերժելու միտքը հալածանքի ամենակտրուկ արտայայտութիւնից մէկն է: Եւ այս միտքը ներկայ ժամանակում յատկապէս անտեղի և անյաջող է:

Այս բանը զգալով Կազանի քարոզչական ժողովի մեծամասնութիւնը դէմ է եղել եկեղեցուց մերժման առաջարկին և առաջարկել է եկեղեցու հակառակ գրական հոսանքի դէմ՝ գաղափարական միջոցներով, գրականութեամբ մաքառել:

—Навказъ—(№ 179) «նշովք՝ գրողներին» (Апаксма писателямъ) վերնագրի տակ կարգում ենք հետեւեալը.

«Յոստոսի 2-ին Սինոդի նիստին, որին նախագահում էր միտրոպոլիտ Ֆլավիանը նկատողութեան առնուեց այն խնդիրը, որ վերաբերում է Կազանի միսսիօներական ժողովի որոշմանը, որով պէտք է նշովքի ենթարկուէին մի քանի հրապարակագիրներ և գրականութեամբ պարագողներ, որոնք իրանց գրուածքներով մոլորեցնում են պրաւօսլաւ ազգաբնակիւթիւնը և նպաստում են նրա մէջ տարածուելու զանազան տեսակի մոլար ուսմունքներ:

Նիստին մասնակցողները նկատեցին Գերմոգէն եպիսկոպոսի զեկուցման մէջ, (որ ընդունել է ժողովը), խօսւում է միայն մտաւորականների (իտելլիգենցիայի) մէջ տարածւող գրական արտադրութիւնների մասին, բայց չի խօսւում այն գրականութեան մասին, որ մեծ ծաւալ է ստացել աշխատաւոր գիւղացիների մէջ և որը աւելի մեծ վնաս է բերում քան Լէոնիդ Անդրէեւի և ուրիշ հեղինակների արտադրութիւնները, որոնք մատնանշուած են Գերմոգէն եպիսկոպոսի զեկուցման մէջ: Նիստում նկատ առնուեց և այն, որ պէտք է մաքառել ոչ թէ գրականութեան վերինների այլ ստորինների դէմ: Ամենից առաջ պէտք է ոչնչացնել նաւ Պինկերտոնօվներին, և Շերլոկ - Խօլմս-

ներին և այլոց փողոցային գրականութիւնը: Վերջ ի վերջոյ Սինօդը վերջնական եղրակացութեան չեկաւ: Որոշուեց որ նոյնի խնդիրը յանձնուի Յովհան եպիսկոպոսի նախագահութեամբ եղող յանձնաժողովին, որը (Յովհան եպիսկոպոսը) ինչպէս խօսում են հոգևոր շրջաններում, համակիր չէ եկեղեցուց որևէ կերպ մերժման:

Յուլիսի 8-ից Ս. Պետերբուրգի հոգևոր ձեմարանում բացուել են Ս. Սինօդի ուսումնարանական յանձնաժողովի կազմակերպած բնագիտութեան դասընթացքների հոգ. դպրոցների ուսուցիչների համար: Սպասում են, որ դասընթացքը լսելու համար 130 հոգի կը գան: Դասընթացքը ղեկավարելու համար հրաւիրուած են մայրաքաղաքի աշխարհիկ բարձր ուսումնարանական հաստատութիւնների ուսուցչապետները: Դասընթացքի գլխավոր ղեկավար և տեսուչ նշանակւում է Սրբ. Սինօդի ուսումնարանական յանձնաժողովի անդամ Պ. Պօլիանսկին, դասընթացքը կը շարունակուի մինչև յուլիսի 31-ը:

Հնագիտական պեղումների ժամանակ կիւում մետրոպօլիտական տան շրջակայքում գնուած են XI-րդ դարի եկեղեցու երկու նոր աբսիդներ: Տաճարը ունի հինգ աբսիդ և, նայելով մնացորդների նկարներին ու զարդարանքներին պատկանում է հին շրջանի հարուստ տաճարներին:

ՅՈՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՅԻ.

Տաճկաց կառավարութեան նոր օրէնքով եկեղեցին և՛ եկեղեցական հաստատութիւնները Մակեդոնիայում մնում են այն ազգի քրիստոնեայ համայնքին, որ մեծամասնութիւն է կազմում. փոքրամասնութեան իրաւունք և միջոց է տրւում նոր եկեղեցի շինել: Կ. Պօլսի յոյն տիեզերական պատրիարքը և պատրիարքարանը չեն կա-

բողանում համակերպուել այս օրէնքին, որովհետեւ մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութեան մեծամասնութիւն կազմում են բողարները, և նոր օրէնքով իրաւատէր դառնում է բողարների էկզարիւր:

Այս առիթով տիեզերական պատրիարքն ու պատրիարքարանը սրուշել են ազգային ժողով դուժարել օրթոդոքս եկեղեցիներին վերաբերեալ նոր օրէնքի համար խորհելու: Իրաւանց և դաւանութիւնների նախարարը յայտնել է, որ կառավարութիւնը թոյլ չի տայ այդպիսի ժողով: Կարծւում է, որ պատրիարքն ու պատրիարքական խորհուրդը կը հրաժարուեն:

Եկեղեցական այս խնդրի առիթով յոյն Յովակիմ տիեզերական պատրիարքը յունիսի 29-ին ներկայացել է սուլթանին, որ պատրիարքին յարգանքով ընդունելուց յետոյ հրաւիրել է նրան նստել: Պատրիարքը յայտնել է իւր և յոյն ազգի մեծ վիշտը Մակեդոնիայի եկեղեցիների մասին՝ նոր ընդունուած օրէնքի պատճառով: Այս օրէնքը, ասել է պատրիարքը, հակառակ է օրթոդոքս եկեղեցու կանոններին և յոյն պատրիարքարանի առանձնաշնորհութիւններին, որ յարգուած են սուլթաններից ու իրարու յաջորդող կառավարութիւններից: Պատրիարքարանը չընդունելով այդ օրէնքը միշտ էլ պէտք է բողոքի: Ըստ «Բիւզանդիոն»ի սուլթանը պատասխանել է որ՝

«Ինքն ալ մասնակից է յոյն պատրիարքարանին եւ յոյն ազգին զգացած ցաւին եւ կը փափագի, որ յարգուին յոյն պատրիարքարանին եւ ազգին տուած առանձնաւորեցումները: Իբր սահմանդրական միապետ ստիպուած էր վաւերացնել խորհրդարանին կողմէ փութակուած օրէնք մը»:

Տ. Յովակիմ պատրիարքը սահմանադրական միապետների բացառիկ իրաւունքները մատնանշելով, խնդրել է սուլթանին քուէարկուած օրէնքը չը հաստատել, ներշնչումներ անելով կառավարութեան, որ յարգուեն եղած կարգերը: Սուլթանը դիտել է, որ չի կամենում իւր յոյն հպատակները վշտացնել: Բայց և բեկանել օրէնքը չի կա-

մենայ. պէտք է որ պատրիարքարանն ու կառավարութիւնը աշխատեն վէճը համերաշխօրէն կարգադրել. Ունկնդրութիւնը տեւել է 20 րոպէ:

Կ. Պօլսոյ լրագրերում ընդարձակ յօդուածներ են նուիրւում պատրիարքի խօսակցութեանը սուլթանի հետ:

Յունաց պատրիարքարանը սպառնում է, որ եթէ եկեղեցիների վերաբերութեամբ նոր օրէնքը զօրութիւն ստանայ, կը հրաժարուի պատրիարքը, կը լուծուի պատրիարքարանի խորհուրդը. ինչան սգոյ կը դատարեցնուեն եկեղեցական հրապարակական հանդէսները, ժամասացութիւնները, կը փակուեն եկեղեցիները, և այլն:

Տաճիկ լրագրները հեղնութեամբ են վերաբերում այդ սպառնալիքին. նրանք ասում են, կառավարութիւնը հաստատուած օրէնք պէտք է դորժադրի: Եթէ յոյները չեն կամենայ եկեղեցական հանդէսներ կատարել, եկեղեցիները կը փակեն, չեն ուզի աղօթել, պատրիարքը կը հրաժարուի և պատրիարքական խորհուրդը կը դադարի գործելուց, այդ իրանց ներքին գործն է. կառավարութիւնը չի ստիպի որ նրանք աղօթեն Աստծուն:

Մշակի (№ 171) Կ. Պօլսոյ թղթակիցը գրում է.

«Յէնէրի յոյն պատրիարքարանը մեծ վրդովի մէջ է: Յանձնախումբ մը, որ պաշտօն ունէր տեղեկագիր պատրաստելու, թէ հանրէ է ազգ. ժողով դումարելու եկեղեցիներու հարցի մասին, իր աշխատութիւնները աւարտած է:

Պատրիարքը դրաւոր դիմում ընելով արդարագատութեան մինիստրին՝ արտօնութիւն խնդրած էր ազգ. ժողով դումարելու: Մինիստրը մերժած է տալ այդպիսի արտօնութիւն մը: Միևնոյն ատեն պատրիարքը արդէն շրջաբերական ուղարկած է ըստ թեմական միարօպօլիաներուն, հրահանգնելով որ իրենց պատգամաւորները ընտրեն: Ըստ այդ շրջաբերականի՝ ժողովը պիտի բաղկանայ 12 սինոդականներէ, քաղաքական ժողովի 8 անդամներէ, 8 պաշտօնավարող միարօպօլիաներէ և պատրիարքարանի 87 թեմերէն ընտրուած 87 պատգամաւորներէ:

Շրջաբերականը կարելի է համառօտել ստպէս.

1) Սահմանադրական բէթիմը, որ եղբայրութիւն, հաւասարութիւն և ազատութիւն պիտի ըլլէր ճշուած տարրերու,

իրականութեան մէջ բոլորովին հակառակն է և նոյն իսկ «ազատութիւնը» աւելի գէշ կերպով մեկնուեցաւ ու գործադրուեցաւ:

2) Սիստեմատիկ հալածանք յոյն հասարակութեան դէմ և բռնաբարութեամբ անհատական իրաւունքներու և առանձնաշնորհութեանց:

3) Փոքրիկ օրինադանցութիւն մը, օրինակ զինուորութիւն մը, պատճառ կը բռնուի «ապստամբութեան զրպարտութիւն» նետել քաղաքի մը կամ հասարակութեան մը վրայ. ծանր պատիժներ կը տրուին, անմեղներ կը դատապարտուին, կըրօնքն ու եկեղեցականները կանապատուին, եկեղեցիներն ու գերեզմանները կը խուղարկուին:

4) Նիծաղելի մատնութիւն մը կը բաւէ որ քահանաներ ու երեւելիներ բանտարկուին, դաւադիրներու վայել ընթացքի ենթարկուելով: Զէնքեր հաւաքելու պատրուակի ներքեւ՝ ծեծ: Խոշտանդանք անպակաս են շատ տեղեր ու այդ ամենը սահմանադրական պաշտօնեաներու ձեռքով:

5) Քահանաներ ու առաջնորդներ կը ձերբակալուին ու կը բանտարկուին իշխանութեանց կողմէ, կուրացուին դպրոցական ու կրօնական տառնաձնաշնորհութիւնները. վանքերու և քրիստոնեայ համայնքներու սեփականութիւնները կը դրաւուին, ցեղադրական վիճակ փոխելու և քրիստոնեայ ազգաբնակչութիւնը տկարացնելու համար՝ դուրսէն իսլամ դադթականներու տեղ կը տրուի, մինչդեռ միւս քրիստոնեայ դադթականներու հաստատութիւնը խտտիւ կարգելուի:

6) Փոքր Ասիոյ Ստամբուլի իշխուած քրիստոնեաները, որոնք դարերով պահած են իրենց քրիստոնէութիւնը, այսօր քրիստոնեայ չեն ճանչցուիր, և մարդահամարներուն մէջ, հակառակ իրենց բողոքին, իբր իսլամ կարձանագրուին: Անչափահասներու բռնի իսլամացումի ձգտումը կը շարունակուի յայտնապէս:

7) Կը բողոքէ, որ բուլղարներուն, պատրիարքական շրջաբերականի բառովը՝ «հերձուածողներուն», նոր բէրաթներ կը տրուին կառավարութեան կողմէ և չեն ճանչցուիր օրթոդոքս եկեղեցիին իրաւունքն և կարգը:

Այդ և ուրիշ կարգ մը թուարկութիւններով՝ շրջաբերականը կը դգացնէ ազգ. ժողովի մը գումարումն և ազգին կամքը՝ տալու համար այն որոշումը, որ «Ատաուած պիտի թելադրէ այդ մեծ ժողովին»:

Ազգ. ժողովը պիտի բացուի յառաջիկայ 1/14 սեպտեմբերի «Թանին» բուռն ոճով կը քննադատէ պատր. շրջաբերականը: Կըսէ. «Պատրիարքարանն իր այդ շրջաբերականով, երի-

տասարդ և ազատ Թուրքիոյ մասին, իր թւերը վեր սոթտած հակառակորդ ըմբիշի մը պէս մէջտեղ կելլէ ու կը խոյանայ սահմանադրական բէժիմի վրայ * * * : Այդ շրջաբերականը, ծայրէ ի ծայր, հաւաքածու մըն է խռովարարութեան և դըրդումներու» :

Արդարագատութեան գործերու մինիստըր արտօնած չէ, ինչպէս դուռեցաւ, ազգ. ժողովի դումարումը, որովհետև յունական պատրիարքարանի առանձնաշնորհութեանց մէջ այդպիսի տրամադրութիւն մը չկայ» :

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

(Աթք. Вест.)

Էտենբուրգի բողոքական համաշխարհային ժողովը : Այս ժողովը տեղի է ունեցել այս տարի յուլիսի 14—23 ն. տ. և բողոքականների եկեղեցական կեանքում համարում է խոշոր իրողութիւն : Անգլիայի բողոքական մասուլը ի նկատի ունելով ժողովի բազմամարդութիւնը անուանում է այն համաշխարհային, ընդհանրական (կաթողիկէ), բայց իսկապէս եղել է նա բողոքական եկեղեցու մի միջազգային ժողով, որովհետև ժողովին չեն մասնակցել հռովմէական կաթողիկ և օրթոդոքս եկեղեցիները, բողոքական չկոչուող եկեղեցիներից միայն անգլիական եկեղեցին է մասնակցել : Ժողովին ներկայ են եղել 1200 պատգամաւորներ աշխարհի ամեն կողմի 160 միսօներական ընկերութիւններից :

Ժողովի գլխաւոր նպատակն եղել է մշակել միսիօներական գործող բանակի համար մաքառելու մի ընդհանուր ծրագիր : Խնդիրների մշակութիւնը սկսուել է 1900 թուից, կազմուած էին զանազան մասնաժողովներ, ուր վերաքննւում էին և ապա ժողովի վճռին ենթարկւում հարցերը : Մասնաժողովի ղեկուցումները նախապէս տրաւում էին, և ժողովի խորհրդածութեան առարկայ դառնում. կազմած էր միսիօներների գործունէութեան քարտէշը : Զեկուցումների մասին խորհրդածութիւնները կրում էին խիստ գործնական բնուորութիւն : Ամեն մի հետաորին խօսելու 7 վայրկեան ժամանակ էր տրւում, այդ միջո-

ցում նա պարտաւոր էր ասել ինչ որ հարկաւոր էր համարում յայտնել: Նախագահն էր յայտնի Մ-ի Մօտտը. Ամեն մի մասնաժողովի զեկուցմանը օր էր յատկացուած: Ժողովի հոգսերից առաջիններն էին ուժեղացնել միսսիօներական գործողութիւնը Հեռաւոր Արեւելքում, ուր սկըսւում է քաղաքակրթութիւնը, և Աֆրիկայում՝ ուր ընդարձակ յաջողութիւն ունի մահմետականութիւնը: Քրիստոնէական դաստիարակութեան համար բարւոք է համարուել հրատարակել կրօնական և դաւանաբանական գրքեր: Հաւատապատումներ, խուսափելով հին ձևերից, որպիսին է վեստմինիստրեան 39 հատուածեան Հաւատապատումը: Անհրաժեշտ համարուեց ազգային հոգով դաստիարակութիւն: Կարևոր համարեց բոլոր տեսակի միսսիօնների միահամուռ և մի ուղղութեամբ գործունէութիւն: Որոշուած է դարձեալ գումարել միսսիօներական ժողով, և կազմուած է միջազգային մի յանձնաժողով 35 հոգուց բաղկացած: Այս յանձնաժողովը կոչւում է «չարունակող» և պէտք է ապագայ ժողովի համար հարկաւոր նախապատրաստութիւնները տեսնի: Ժողովը իբրև եզրակացութիւն երկու թուղթ է հրատարակել, մէկը քրիստոնեայ պետութիւնների քրիստոնեաներին և միւսը ոչ քրիստոնեայ պետութիւնների քրիստոնեաներին ուղղած:

— Մայիսի 26-ին Էյդենախում գումարուել է Գերմանիայի աւետարանական եկեղեցական ժողովը. այսինքն գերմանական պետութիւնների եկեղեցական վարչութիւնների համաժողովը: Գերմանական յանձնաժողովի սովորական հաշիւներն ու զեկուցումն նայուելուց յետոյ քննուեցին եկեղեցու յարաբերութիւնը ժողովրդական դպրոցներում կրօն ուսուցանելու, Գերմանիայի աւետարանական եկեղեցիների համար հոգևոր երգերի միօրինակ գրքեր հրատարակելու, եկեղեցուց հեռացողների դէմ միջոցներ ձեռք առնելու, նորահաս մատաղ սերնդի վերայ կրօնական աղդեցութեան, Սուրբ գրքի հնախօսական ինստիտուտի և վերջապէս համայնքի պատտորի օգնականի պաշտօնի մասին:

Օգոստ. 5-ին ն. տ. բացուել է Բերլինում «Ազատ քրիստոնէութեան և կրօնական առաջադիմութեան համաշխարհային կոնգրէսը»:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պապի կոնգալը աստուածաբանութեան դոկտորութեան երգման մասին.

Պիոս X. պապը, ասում է Церк, Вѣст. կամենալով նազարտ պահպանել հաւատի մաքրութեան և նրա դաստառութեան կանոնականութիւնը, առաջադրում է Ս. Գրքի դոկտորի աստիճանի թեկնածուներին պահանջել հետեւել երգումն.

«Ես, ՌՌՌ ամենայն պատշաճ յարգանքով հնազանդում և անկեղծօրէն հետեւում եմ առաքելական աթոռի կամ Հռովմայ քահանայապետութիւնների բոլոր վճիռներին, ծանուցումներին և առաջադրութիւններին, որոնք վերաբերում են Ս. Գրքին և նրան մեկնելու ուղիղ միջոցին, մանաւանդ Լեոն XIII-ի 1893 թ. նոյեմբերի 18-ի «Providentissimus Deus» և նոյնպէս Motu proprio, Պիոս X-ի 1907 թ. նոյեմբ. 18-ի «Praestantia Scripturae Sacrae» և նրա՝ 1909 թ. մայիսի 7-ին «Vineae electae» կոնգակին, որի մէջ ասուած է, «բոլորը խղճի մտօք հնազանդում են Ս. Գրքի պապական յանձնաժողովին վճիռներին, որոնք վերաբերում են ինչպէս ցայսօր, նոյնպէս և այսուհետև հրատարակուելիք վարդապետութեանը, նոյնպէս և ս. ժողովի (կոնգրէգացիա) պապից հաստատուած հրովարտականներին և կը մեղադրուեն որպէս հնազանդութիւն խանդարող կամ անխորհուրդ բան անողներ կամ այս բոլորի համար կենթարկուեն ծանր ամբաստանութեան, ով բերանացի կամ գրաւոր կերպով կընդիմանայ այս վճիռներին». ըստ այսմ ես խոստանում եմ հաւատարմութեամբ, անվտանգ, և անկեղծօրէն հսկել և պահպանել ինչպէս բարձրագոյն ձևն ու վարդապետութեան սահմանը (stu-

diorum), կանոնը (principia) և առաքելական դահից և պապական Ս. Կրքի յանձնաժողովից հրատարակուած և հրատարակելիք հրովարտակաները. և երբէք, ոչ դասաւանդութեան ժամանակ ոչ որ և է ուրիշ միջոցով բերանացի կամ գրաւոր նրանց վերայ չյարձակուել: Այսպէս խոստանում եմ, այսպէս երգւում եմ և այսպէս թող օգնի ինձ Աստուած և այս Ս. Աւետարանը:

«Россиа» լրագիրը առնելով Berliner Börsen Courier-ից Սպանիայի հակակղերական նախարարութեան համար գրում է.

Պէտք է խոստովանել, նկատում է Բերլինի լրագիրը, Վատիկանի դրութիւնը այն կռուի մէջ, որ սկսել է նա սպանական կառավարութեան հետ, շատ ծանր է, եթէ չասենք անելանելի է: Վատիկանը իւր յոյսը դրել էր, դահի հետամուտ Դոն Խայմէ Բուրբոնի կուսակից կղերականներին ապստամբութեան վերայ, բայց այս յոյսը դուր անցաւ, որովհետեւ Բուրբոնական տան աւագ շառաւիղի կուսակիցները անգոր գրանուեցին պաշտպանել իրանց թեկնածուի կամ կաթոլիկ եկեղեցու իրաւունքը:

Դատելով այն չափերից, որ կռիւը այժմ ոտացել է սպանական և Հռոմի պապական կառավարութիւնների միջև, գործը ոչ թէ կոնկորդատի վերաբնութեամբ, այլ բոլորովին լուծուելով կը վերջանայ պատմական այդ դաշնակիցների մէջ: Սպանիան վերջ է տալիս իւր հին աւանդութիւններին և մըտնում է իւր քաղաքական կեանքի նոր շրջանը:

